ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՄԱՐՏԻ 2020ԹՎԱԿԱՆԻ N 11-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԾԱԽՍ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 90-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության << Բյուջետային համակարգի մասին>> օրենքի 29-րդ հոդվածի դրույթներով, համաձայն համայնքի ղեկավարի առաջարկության, ավագանին ***որոշում է.***

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի 2020թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից(հոդված՝ 4891) հատկացնել՝

1.1197000(մեկ միլիոն մեկ հարյուր իննսունյոթ հազար) ՀՀ դրամ, ուժեղ քամիներից վնասված Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Շինուհայրի ՆՈՒՀ-ի շենքի տանիքի վերանորոգման աշխատանքները իրականացնելու նպատակով:

2.75000(յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ՝ <<Խոտի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ին դրամաշնորհի տեսքով(ուժեղ քամիներից վնասված դպրոցի շենքի տանիքի վերանորոգման աշխատանքներին օժանդակելու նպատակով):

3.40000 (քառասուն հազար) ՀՀ դրամ՝ <<Գորիսի վետերանների միություն>> ՀԿ-

ին դրամաշնորհի տեսքով (Տաթև համայնքի կին վետերանների համար կանանց տոնի միամսյակին նվիրված տոնական միջոցառումներ կազմակերպելու նպատակով):

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆ ՀԱՅԿ

ԳԱՌՆԻԿՅԱՆ ՍԵՎԱԿ

ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐՏԻՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՀԱԿՈԲՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ՄԱԹԵՈՍՅԱՆ ԳԵՍԻԿ

ՄԻՆԱՍՅԱՆ ԳՈՒԺ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՈՒՐԱԴ ՍԻՄՈՆՅԱՆ